ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Ծաղկաշատ համայնք, հասցե գ. Ծաղկաշատ

Հեռախոս 094-44-63-93

Էլ. փոստ tsaghkashat.lori@mta.gov.am

15 դեկտեմբերի 2016թ.

0-079

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի Պարոն Նալբանդյան

Կից Ձեզ եմ ներկայացնում ավագանու թիվ 19-Ն որոշումը և 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը:

Առդիր՝ 17էջ

Համայնքի ղեկավար՝ Ս. Թանդիլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԾԱՂԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաշատ համայնք, հասցե գ. Ծաղկաշատ,

Հեռախոս 094-44-63-93

Էլ. փոստ tsaghkashat.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2016 թվականի N 19 -Ն

ԾԱՂԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով
Ծաղկաշատ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ծաղկաշատ համայնքի 2017-2021 թթ հնգամյա զարգացման ծրագիրը
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Հարություն Թանդիլյան			
2. Վարդէկ Սոխակյան			
3. Արա Փիրոսյան			
4. Նորայր Չարդարյան			
5. Նորա Շամիլյան			

Ծաղկաշատ համայնքի ղեկավար Ս. Թանդիլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2017 - 2021ԹԹ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԾԱՂԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ

13.12.2016թ 19-Ն որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԹԱՆԴԻԼՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Ինչ է հնգամյա ծրագիրը, համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում
2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն
3. Համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը
4. Համայնքի հողային հաշվեկշիռը
5. Գյուղատնտեսություն և անասնապահություն
6. Համայնքի հիմնական ցուցանիշների գնահատումը
7. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
8. Համայնքի ծրագրերի ցանկի կազմում , առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում
9. Համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Ներածություն

Լոռու մարզի Ծաղկաշատ համայնքի 2017-2021թթ զարգացման հնգամյա ծրագիրը /այսուհետ ՀԶՀԾ/ մշակելիս հաշվի է առնվել , որ համաձայն 2015թ դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181 հ-ի , ՏԻՄ –երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են 5 տարի ժամկետով և 210-րդ հ-ի , <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017թ-ի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյան այլ հնգամյա ծրագիր:
ՀԶՀԾ-ն մշակվել է ՝ հիմք ընդունելով ներկայումս գործող << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում /ոլորտներում/ , ՀԶՔԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները:
ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

. համայնքի ֆինանսական կարողություն
. համայնքի բնակչության թվաքանակը
. համայնքում առկա վտանգները, ռիսկերը

ԻՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

1. Համայնքի իրավիճակի գնահատումը:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3.Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Լոռու մարզի Ծաղկաշատ համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա, չորս կողմից շրջափակված է գեղատեսիլ անտառներով և սարերով, Լոռվա այս գողտրիկ անկյունը մարզկենտրոն Վանաձոր քաղաքից գտնվում է 64 կմ հեռավորության վրա:
Գյուղը հյուսիսից սահմանակից է Հաղպատ գյուղին, հյուսիս - արևելքից սահմանակից է Նեղոց, Շնող և Թեղուտ գյուղերին, իսկ հարավ-արևելյան մասից՝ Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանին, հարավից սահմանակցում է Մոտկորի տարածաշրջանին, արևմտյան կողմից գյուղը սահմանակից է Ակներ թաղամասին:
Որպես գյուղ Ծաղկաշատն ունի հին պատմական արմատներ, ստույգ տվյալներ չի արձանագրվել, սակայն 1927թվականից պաշտոնապես այն անվանվել է Խաչի Դուռ անվամբ, անվանումն առաջացել է գյուղի հարավ-արևմտյան կողմում, ոչ մեծ բլրի վրա հայտնաբերված 9-10-րդ դարերում կառուցված մատուռ՝ իր խաչով, այդտեղից գյուղն անվանակոչվել է Խաչի Դուռ:

2-րդ համաշխարհային պատերազմից հետո գյուղը վերանվանվել է Ծաղկաշատ անունով, ընդգրկելով նաև հարակից տարածքները՝ Ջարդ, Գեղատեղ, Կախմախուտ փոքր բնակավայրերը: Ծաղկաշատ անունն առաջացել է բազմաթիվ և բազմերանգ ծաղիկների բազմազանությունից: Գյուղում կա 9-10-րդ դարերում կառուցված մատուռ, 70-ականներին կառուցված 2-րդ համաշխարհային պատերազմում զոհված մարտիկների հիշատակին նվիրված հուշարձան - կոթող, կան խաչքարեր և կացարանների մնացորդներ, միջնադարյան գերեզմանոցներ և այլն:

2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

Համայնքի բնակչությունը կազմում է 274 մարդ, այդ թվում՝ արական՝ 136 իգական՝ 138 մարդ:

Բնակչության սեռատարիքային կազմը հետևյալն է.

1. Երեխաներ 0-4 տ	10
2. Դպրոցականներ	10
3. 16-62տ	172
4. Թոշակառուներ	64
5. Հաշմանդամներ	6
6. Աշխատունակներ	52

Համայնքը ունի 75 տնային տնտեսություն, որոնցից 8-ը նպաստառու է:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 75 սեփական առանձնատուն: Կան բազմաթիվ կիսակառույց և վթարային տներ 1988թ. երկրաշարժից հետո , որոնք բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակի պատճառով չեն վերանորոգվել;

Կրթություն

Համայնքը ունի մեկ հիմնական դպրոց, որտեղ սովորում են 10 աշակերտ : Դպրոցը չունի մարզադահլիճ և մարզագույք: Դպրցի շենքն ունի 220քմ մակերես: Դպրոցի աշխատակազմը բաղկացած է 16 անձից:

Մշակույթ

Համայնքն ունի մշակույթի տուն, որն ունի խիստ հիմնանորոգման կարիք: Այն կառուցվել է 1997թվականին, ունի 74քմ մակերես:

Առողջապահություն

Համայնքում կա մեկ ամբուլատոր շենք, որը պատկանում է Ալավերդու ԲԿ-ին: Ամբուլատորիան ունի մեկ բուժ-աշխատող:

3.Տեղական ինքնակառավարման մարմինները

Համայնքի ինքնակառավարումը իրականացնում է ավագանին՝ կազմված 5անձից և համայնքապետը:

Համայնքապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

Աշխատակազմի քարտուղար	1դրույք
Առաջատար մասնագետ	1դրույք
Վարորդ	0,75դրույք
Հավաքարար	0,75դրույք
Օպերատոր	1դրույք

4. Հողային հաշվեկշիռը

Համայնքի վարչական տարածք	2764	հա
Վարելահողեր	85	հա
Խոտհարք	232	հա
Տնամերձ հողամասեր	52	հա
Արոտավայր և քարքարոտ	384	հա
Սեփականաշնորհված	238	հա
Մեկ հողաբաժին	1,45	հա

5.Գյուղատնտեսություն և անասնապահություն

Ազգաբնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, որի համար համեմատաբար բարենպաստ պայմաններ կան: Հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվում են տնամերձ հողամասերում, կաթի վերամշակումը իրականացվում է տներում, որը բարդույթ է հանդիսանում անասնապահությամբ զբաղվող ֆերմերների համար:

Համայնքի անհատական և ֆերմային տնտեսություններում պահվում են հետևյալ անասունները՝

Խոշոր եղջերավոր անասուններ	547գլ.
Մանր եղջերավոր անասուններ	193գլ.
Խոզեր	161գլ.
Ձիեր	62 գլ.
Մեղու	147 փեթակ
Թռչուն	895 թև

6.Հիմնական ցուցանիշների գնահատում Տրանսպորտային միջոցներ

Համայնքում առկա է 2 միավոր գյուղտեխնիկա / անվավոր/ և 1 միավոր թրթուրավոր: Ալավերդի քաղաքի հետ կապն իրականացվում է միկրոավտոբուսով 500 դրամ արժեքով և համայնքի բնակչության սեփական ավտոմեքենաների միջոցով :

Ճանապարհ

Համայնքն Ալավերդուն է միացված 18կմ երկարությամբ գրունտային ճանապարհով , սակայն այն ունի հիմնանորոգման կարիք: Համայնքն ունի 6 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհներ և գյուղամիջյան 4կմ երկարությամբ ճանապարհներ, որոնք ունեն վերանորոգման կարիք:

Ջուր

Համայնքը սնուցվում է սարերից եկող ինքնահոս խողովակաշարով , որն ունի 4000մ երկարություն:

7. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Ռազմավարություն

Ծաղկաշատը Հայաստանի ամենագեղեցիկ անկյուններից է. Ծաղկաշատում տուրիզմի զարգացման համար առկա են բոլոր հնարավորությունները. գյուղի դիրքը, բնակլիմայական պայմանները լեռնային տուրիզմի հարուստ տեղանքը տուրիզմը զարգացնելու լիարժեք հնարավորություններ է ընձեռում իր լանդշաֆտերով և ռելիեֆով հանդերձ:

Բարեփոխումներ անցկացնելու նպատակով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական , մշակութային և հանգստի պայմանները , գյուղը դարձնել գեղեցիկ , բարեկարգ և ամենակիրթ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով , նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

1. Զարգացնել անասնապահությունը համայնքում.
2. Զարգացնել հողագործությունը և այգեգործությունը ձեռք բերելով համայնքի համար անհրաժեշտ գյուղտեխնիկա:
3. Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը, հանգիստը աշխատանքից ազատ ժամանակ:
4. Համայնքը ապահովել շուրջօրյա խմելու ջրով , կառուցել խմելու ջրի մատակարարման ներքին ցանց և կանխել սուր վարակիչ հիվանդությունները:
5. Վերանորոգել և բարեկարգել պատմաճարտարապետական հուշարձանների շրջակայքը՝ զբոսաշրջության զարգացման համար:
6. Կազմակերպել աղբահանությունը:
7. Կազմակերպել լուսավորության անցկացումը:
8. Կառուցել ոռոգման ցանց:

Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում :

8. ՀԱՄԱՅՆՔԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1.

Վարչական շենքի հիմնանորոգում

Ներածություն

Համայնքը չունի համայնքապետարանի շենք: Կառուցման համար անհրաժեշտ է 13մլն դրամ:

Պատասխանատու համայնքի ղեկավար

Խնդիրները

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են բարերարների և դոնոր կազմակերպությունների ներդրումը:

ԾՐԱԳԻՐ 2.

Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում

Ներածություն

Ներհամայնքային ճանապարհները ոչ բարվոք վիճակում են: Անձրևների ժամանակ դառնում են անանցանելի: Հարկավոր է հրատապ ասֆալտապատել 3000քմ ճանապարհ :

Խնդիրը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել համայնքային , համայնքին հատկացվող բնապահպանական , պետական և դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջամտությունը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է շուրջ 46 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3.

Ծաղկաշատ - Ալավերդի ճանապարհների վերանորոգում

Ներածություն

Ծաղկաշատ - Ալավերդի ճանապարհը գտնվում է ոչ բարվոք վիճակում: Ճանապարհը մասամբ ասֆալտապատ է, որն ունի վերանորոգման կարիք, մյուս մասը գրունտային է և ունի ասֆալատապատման կարիք:

Համայնքի ուժերով կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, փոսային նորոգումներ: Անհրաժեշտ է պարբերաբար կատարել փոսային նորոգումներ:

Խնդիրը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել համայնքային , պետական և դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջամտությունը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է շուրջ 55 մլն դրամ, որի 10 տոկոս ներդրումը համայնքը պատրաստ է կատարել համայնքային բյուջեից:

ԾՐԱԳԻՐ 4

Գյուղտեխնիկայի ձեռք բերում

Ներածություն

Ծաղկաշատ համայնքն ունի 85հա վարելահող , 52 հա տնամերձ հողամաս, սակայն համայնքը չունի համապատասխան գյուղ տեխնիկա վարելահողերը մշակելու համար:

Խնդիրը

_Գյուղտեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ է 15 մլն դրամ գումար, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը:

ԾՐԱԳԻՐ 5.

Մշակույթի տան շենքի վերանորոգում

Ներածություն

Մշակույթի տան շենքը կառուցվել է 1997թվականին, այն ունի խիստ վերանորոգման կարիք:

Պատասխանատու համայնքի ղեկավար

Խնդիրները

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել համայնքային, միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցումը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է շուրջ 10 մլն դրամ :

9.Պատասխանատու համայնքի ղեկավար

Համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը

Համայնքում ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը : Լոռու մարզի Ծաղկաշատի համայնքում այն ունի հետևյալ պատկերը.

Եկամուտների տեսակ	2012 փաստացի	2013 փաստացի	2014 փաստացի	2015 փաստացի	2016 փաստացի
Եկամուտներ ընդամենը	8362.2	8362.2	8362.2	8362.2	8362.2
Հարկային եկամուտ	866.2	866.2	866.2	866.2	866.2
Հողի հարկ	2092.2	2092.2	2092.2	2092.2	2092.21
Գույքի հարկ	132	132	132	132	132
Տուրքեր	10	10	10	10	10
Պետական	-	-	-	-	-
Տեղական	300	300	300	300	300
Ոչ հարկային եկամուտ	1084	1084	1084	1084	1084
Դոտացիա	3500	3500	3500	3500	3500

Համայնքի ղեկավար՝ Ս. Թանդիլյան

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

«Համայնքապետարանի շենքի կառուցում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Անգեղակոթ համայնքում գյուղատնտեսության զարգացումը խթանել:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակների եկամուտների աճի ապահովում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Եկամտի աճ	2016	2017	2018	2019	2020	2021
		13մլն	6մլն	7մլն			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերակառուցված ոռոգման ջրագիծ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			6մլն	7մլն			
	2. Կառուցված ոռոգման ներքին ցանց						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Տարածքի հատկացում 1.2. Շինանյութի ձեռքբերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Վարձու աշխատողների ֆինանսների ապահովում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 10մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 13մլն դրամ՝						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարերարներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բյուջեի պակաս						
Ծրագրի հիմնական շահառուները	Ամբողջ համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2018թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ապահովել համայնքին գյուղապետարանի շենքով						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

« Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Անգեղակոթ համայնքում կազմակերպել կոմունալ տնտեսության աշխատանքները:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով և կոյուղովապահովում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2մլն	1մլն	1մլն			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ,կառուցվածերկրորդ ջրագիծ և կանոնակարգվածջրի բաշխում:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2մլն	1մլն	1մլն			
	2. Կառուցված ջրմուղ-կոյուղի						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. 3կմ ճանապարհի հարթեցում 1.2.1կմ խճապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.9մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 1.1մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2մլն դրամ:						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարերարներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բյուջեի պակաս						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2018թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի ճանապարհների բարեկարգում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

«Ծաղկաշատ-Ալավերդի Ճանապարհների բարեկարգում »
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովում:</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ աճ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>55կլն</td><td>10մլն</td><td>10մլն</td><td>10մլն</td><td>10մլն</td><td>15մլն</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Բարեկարգված միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2. Բարելավված հասարակական տրանսպորտ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ երթուղի</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. 4կմ ճանապրհի հարթեցում:
1.2. 6կմ ասֆալտի ծածկույթի բարեկարգում
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Վառելիքի ծեռքբերում
2.2 Ասֆալտի ձեռքբերում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 20մլն դրամ
Կապիտալ ծախսեր՝ 35մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 55մլն դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Դոնոր կազմակերպություններ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Բյուջեի պակաս</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Ամբողջ համայնքը</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7"></td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 4

«Գյուղտեխնիկայի ձեռքբերում »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խրախուսել ֆիզիկական կուլտուրայի և առողջապահական զարգացումը:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակների մարզական կյանքի ակտիվացման ապահովում:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	աճ	8մլն	8մլն				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ							
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Գյուղտեխնիկայի ձեռքբերում						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 8մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարեբարներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Ամբողջ համայնքը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2017թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բերգավազի ապահովում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 5

«Մշակույթի տան շենքի վերանորոգում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Գործարարմիջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում**						
Ծրագրի անմիջական նպատակ	Հավելյալ եկամուտի աճ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		8մլն	4մլն	4մլն			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ							
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Պատերի սվաղում 1.2. Հատակի և տանիքի վերանորոգում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Շինանյութի ձեռքբերում 2.2. Վարձու աշխատողի աշխատավարձի ֆին. միջոցների ապահովում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3.6մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 4.4մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 8մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպություններ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բյուջեի պակաս						
Ծրագրի հիմնական շահառուները	Ամբողջ համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2018թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ապահովել բնակչության հանգիստը						